


Ի մըրմըռեալ արեաց խուժան՝
Տեսեալ արին ի ծըփման
Օ որդի եւ զհարան իւր սիրուհի,
Ինեւ տայ զանձն ամեհի .
Եւ ոչ դառնայ յետս ունայն :
Կոփել խորհիս աղկաղկ ճարտար .
Յաղթ ժամանակ կուռ ի քար ,
Լ՛յլ միտքդ ի ցնորս , ես ինքդ անշարժ ,
Հիւժին անդամքդ յերկս անվարժ ,
Գրոցդ է ի գործն անյարմար :
Վ ի թխար վիմին կաս միշտ ընթեր
Յարմունկդ ի յեց ի խորհել .
Սիտք քաջատես իցեն թէ քո
Կերպարանել տիպս անգոյ ,
Լ՛յլ ոչ բազուկք ի կոփել :
Ի կապուտակն յառեաց գաղտնիս՝
Ի պարզ գիշեր ընդ երկինս .
Տես զաստեղաց սոսկավի թխար .
Դաշնակաւոր զերագ պար ,
Որ զայնց հրեղէն պընդէ ջիւս :
Լ՛չխարհ փոքրիկ քո այդ մարմին
Եւ տիեզերք ասպին
Կորով շարժմամբն առեալ եւեթ
Ինդնաւորին կենսաւէտ .
Հանգիստն հանգոյն է չէին :
Սատիք յառաջ , խարտեաշ երամ ,
Ի ճեմն ոտից մըրցական .
Երկինք գործոցն իւր աջակից .
Կոչէ զքաջաց պար վեհից ,
Օ Առողջ հոգիս յողջ իրան :



ՄԱՆՐԱՎԻԳ

Գրութեան օրինակ մը :

Դեմետրիոս Պոլիորկետ մակեդոնացի թագաւորը շատ բարիք ըրած էր Լ՛թենացւոց : Երբոր ասիկայ Լ՛թենքէն պատերազմի գնաց , իր կնիկն ու տղաքը այս քաղաքին մէջ թողուց . դժբաղդաբար դիպուածը բերաւ որ յաղթուի թշնամիներէն , ու հարկ եղաւ փախչիլ : Ինքը իբրև ապահով Լ՛թենք կը գիմէր որ հոն քաջուի . բայց Լ՛թենացիք ապերախտութեամբ զինքը ներս չընդունեցան . ետքը իրեն կնիկն ու տղաքն ալ խաւրեցին իրեն՝ ըսելով

Թէ “ Լ՛ցոնք Լ՛թենքի մէջ ապահով չեն , որովհետև կարելի է թշնամեաց ձեռքը իյնան , ” : Դեմետրիոսի շատ ծանր եկաւ այսպիսի փոխարէն մը , որովհետև ճշմարտապէս կը սիրէր զԼ՛թենացիս , ու յարմար առթի սպասեց : Բիչ ատենէն առջինին պէս որ զօրացաւ , մէկէն մեծ բանակ մը հանեց ու եկաւ Լ՛թենքի դիմաց քաղաքը պաշարեց : Լ՛թենացիք մտածեցին որ այսպիսի ապերախտութենէ մը վերջը՝ Դեմետրիոսէ գթութիւն յուսալու բան չէր . անոր համար որոշեցին որ ձեռուրնին զէնք անանկ մեռնին , ու վճիռ հանեցին թէ ով որ անձնատուր ըլլալու խօսք բանայ՝ մահ է պատիժը . բայց ամենեւին մոքքերնէն չէին անցըներ՝ որ համբարանոցներու մէջ ցորեն չունէին : Բաջութիւն վրանին շատ . բայց սովը անանկ կը զայրանար քաղաքին մէջ , որ առանց պատերազմի մարդիկ կը մեռնէին . երկայն ատեն համբերեցին , որչափ որ յուսահատութիւնը կրնայ զօրացընել զմարդ . բայց վերջապէս տեսան որ ասանկ գլուխ ելլելու բան չէ , մէջերնէն խելացիները երան ըսին թէ “ Լ՛լ լաւ է որ Դեմետրիոս ամենքնիս մէկ հարուածով սպաննէ , քան թէ սու վէն մեռնինք . թերևս ինքը մեր կանանց ու տղաքներուն վրայ գթայ ալ , ” : Լ՛յս ըսին , ու քաղաքին դռները բացին իրեն առջև : Ստաւ Դեմետրիոս Լ՛թենք , ու հրամայեց որ որչափ կարգուած մարդիկ կան՝ մեծ հրապարակ մը ժողվուին , և այն տեղոյն չորս կողմը շարել տուաւ իր զինուորները՝ ամենքը սուրերնին մերկացուցած : Բաղաքին մէջ ամէն ձայն կտրեցաւ , ու միայն ողբեր կը լսուէր . կնիկները իրենց էրիկներուն վիզը կը պլուէին , տղաք իրենց հօրերուն ձեռքը արցունքով կը թըրջէին . և ամենքը իրարու վերջին բարևը կու տային : Երբ բոլոր մահուան գայողները ժողվուեցան այս հրապարակը , Դեմետրիոս բարձր տեղ մը ելաւ , ու անկէջ Լ՛թենացւոց երեսը զարկաւ իրենց ապերախտութիւնը . բայց անանկ սրտով կը խօսէր , որ ա-

չուրները արտասուօք կը լեցուէին : Ըթեանացիք խորին լուծեան մէջ էին , ու վայրկեան վայրկենի վրայ սրտերնին կը դողար որ մահուան հրամանը պիտի որոտայ ականջնին : Ըայց Ղեմետրիոս դարձաւ ըսաւ իրենց . « Կ'ուզեմ ցուցը նել ձեզի թէ որչափ յանցաւոր էք ինծի . ձեր թշնամին չէր անիկայ՝ որուն անու զորմ գտնուեցաք . դուք անոր անիրաւեցաք՝ որ զձեզ կը սիրէր , անոր՝ որ հիմա ալ զձեզ կը սիրէ , և ձեզմէ վրէժ խնդրելու համար՝ ահաւասիկ կը ներէ ձեզի ու բարերարութեամբ կը լեցընէ : Ղարձէք ամենքնիդ ալ ձեր բնակարանը . այն միջոցին որ դուք հոս էիք , իմ զինուորներս ցորեն ու հաց կրեցին ձեր տուները » :

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ք

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Գ . Կարևարանին հարկատր ամաններն ու գործիքները :

Կաթնարանին ամաններն ու գործիքները ամէն տեղ միակերպ չեն . մենք հոս տեղս յիշենք աւելի պէտք եղած ու դիւրագործածելիները :

Ա . Կաթի կէտն աճան կամ դոյլ : Ըյս ամանին սովորական ձևը պատկերքին մէջ կը տեսնուի (Ձև Ա) . որուն բարձրութիւնն է 30 հարիւրորդամեզը . և



զըջապատ տախտակներէն մէկը մէկալներէն աւելի երկայն թողուցած է՝ 24 հարդմ . անկից բռնելու համար . տակին տրամագիծն է 15 հարդմ . և բերնին տրամագիծը 26 հարդմ . :

Բ . Տաշտ : Կաթի տաշտին տակի կողմը աւելի լայն կ'ըլլայ քան զբերանը . ասոր երկու կողմէն մէյմէկ շերտ տախտակներ աւելի երկայն թողուցած կ'ըլլայ և ծայրերնին ծակած , որոնցմէ կութը կ'անցընեն տաշտը վերցընելու հա-

մար : Ըսիկայ կը գործածուի կաթը տեղէ տեղ փոխադրելու համար . (Ձև Բ) : Ը որպէս զի կաթը տանելու ատեն ցընցուելով չթափուի , կաթին երեսին վրայ կը դնեն մէկ կտոր թեթեւ տախտակ մը , որ տաշտին բերնէն քիչ մը պզտիկ կ'ըլլայ :

Ձև Բ



Գ . Ղարկոտ , որ է քամոց կաթը անցընելու համար : Ըսիկայ կրնայ ըլլալ հասարակ մաղ մը խիտ հիւսուած մաղէ կամ արծաթի թելէ : Սուիցերիի մէջ կը շինեն ձագա-

Ձև Գ



ռի՝ ձևով թանազէ՝ կամ փայտէ (Ձև Գ) , և ծայրի ծակին մէջ կը թխմեն չորցած լուացած տեսակ մը խոտ , որն որ կաթի ամանին բերանը կը զետեղեն ճանկաձև փայտի մը վրայ :

Դ . Կաթի պահելու աճան : Փորձուած է որ սերը աւելի դիւրաւ և շուտ ու աւելի առատ կը ժողվուի կաթին երեսը , երբոր կաթին ամանին բերանը լայն և տակը նեղ ըլլայ , և կամ տափակ ձևով քիչ խորութիւն ունենայ : Ըմենէն յարմարն է հողէ ամանը , որուն բերնին տրամագիծը 40 հարդմ . ըլլայ ու տակինը 16 հարդմ . և կաթը վազցընելու համար բերնին մէկ կողմը դէպ 'ի դուրս քիթ ձևացուցած , և կամ վարերը մէկ կողմը ծակ մը բացած : Ըրլլայ աղէկ նաև շրջանակներով փայտի շերտերէ , ինչպէս որ տակառը կը շինեն . որուն բարձրութիւնը 8 հարդմ . ըլլայ և տրամագիծը 60^{էն} ինչուան 90 հարդմ . և վարերը մէկ կողմէն ծակած , ուսկից կաթը վազցընելով՝ սերը կը ցամքեցընեն : Սովորաբար ամառը աւելի բարակ կը լեցընեն կաթը և ձմեռը աւելի թանձր .

1 ՏՃ . խուի : 2 ՏՃ . Թէնէի :